ՄԱՍ III-Ա

Հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները

Միջնաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները և ցուցանիշները

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման ընթացքում ՀՀ կառավարությունն առաջնորդվել է ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած ՀՀ կառավարության գործունեության ծրագրով ամրագրված սկզբունքներով:

Ստորև բերված աղյուսակ 1.1-ում ներկայացված են 2014-2016թթ հարկաբյուջետային քաղաքականությունն արտացոլող ամփոփ ցուցանիշները:

Աղյուսակ 1. 1 2014-2016թթ հարկաբյուջետային ամփոփ ցուցանիշները

Ցուցանիշներ	2014թ փաստացի[1]	2015թ ծրագիր[2]	2016թ նախագիծ
Ա. Արտահայտված մլրդ դրամով			
1. Ընդամենը եկամուտներ	1,094.1	1,191.5	1,186.3
այդ թվում՝			
- ներքին եկամուտներ	1,079.6	1,165.6	1,154.8
որից՝			
- հարկեր և պետական տուրքեր	1,049.0	1,138.7	1,129.0
2. Ընդամենը ծախսեր	1,187.4	1,305.6	1,377,0
այդ թվում՝			
- ընթացիկ ծախսեր	1,068.7	1,196.4	1,249.0
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	118.7	109.2	128.0
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	93.3	114.1	190.7
Բ. Արտահայտված ՀՆԱ-ի նկատմամբ %-ով			
1. Ընդամենը եկամուտներ	22.59	24.48	21.79
որից՝			
- ներքին եկամուտներ	22.29	23.95	21.22
որից՝			
- հարկեր և պետական տուրքեր	21.66	23.39	20.74
2. Ընդամենը ծախսեր	24.52	26.82	25.30
այդ թվում՝			
- ընթացիկ ծախսեր	22.07	24.58	22.95

[1] 2014-2016թթ ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով 2014 թվականի փաստացի ցուցանիշներում ներառված չեն որոշ եկամուտների և ծախսերի գումարներ (տես սույն ուղերձի III-Ա մասի 2-րդ հղումը):

[2] «ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված ցուցանիշները և դրանց հաշվարկման հիմքում դրված ՀՆԱ-ի մեծությունը:

- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	2.45	2.24	2.35
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	1.92	2.34	3.5
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	4,843.2	4,867.5	5,442.8

Հիմք ընդունելով ՀՆԱ-ի 21.7 %-ի չափով կանխատեսված ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի եկամուտների մակարդակը և ելնելով ՀՆԱ-ի 3.5 %-ի չափով դեֆիցիտի ֆինանսավորման հնարավորություններից, ՀՀ կառավարությունը ծրագրում է 2016 թվականին ապահովել ծախսերը ՀՆԱ-ի 25.3 %-ի կամ 1,377.0 մլրդ դրամի չափով: